

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԱ. ՏԱՐԻ 1927	Տարեկան 1 ստերլինգ:	ԹԻՒ 9, ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԵՒԹԱՂԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն:)

Գ.

ՑԱՌԱՋԱԲԱՆ ԵՒԹԱՆԵՑՈՒՆՑ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

Բ փոքունս փոքումբք ինչ յանդգնելոց չէ առանց կասկածանաց: Իսկ ես կրտսերս, որ ի վերոյ քան զիս արկի զանձն յաշխատութիւնս, ոչ առաւել եւս իցեմ ընդ տագնապաւ: Զոր աւրինակ եթէ փոքր մակուկաւ ոք կարծիցէ զհամատարած ծովն հատանել անցանել եւ ստահակ հողմոցն մրրկաց ժուժկալ լինել հաշուիցի եւ սակաւ ինչ շարժելոց աղեացն 5

Zacagniի քով կաթողիկէ թղթոց Ցառաջաբանին կը յաջորդեն կարգաւ "Բովանդակութիւն ընթերցուածոց" (էջ 478—479), "Ցառաջագիր" (էջ 479 – 480), համառօտ "Բովանդակութիւն աստուածեղէն վկայութեանց" (էջ 480), "Ցառաջագիր" (էջ 481), ընդարձակ "Բովան-

1 Բ իւթանեցունց, Զ իաւթանեցունց, Ո եւթանեքունց: Ա թխթոյն, Բ (= Եղմ. Թ. 1925 Զ. Մուրատ, Ցայտն. Ցովհ., էջ ՑՀԲ) թղթոց, ԶՈ թղթոյն, G չէք թղթոցն: ԳԷՃՈՒԼՏACEGQ (= Բրուսայի Զ., Կիւլէսէրեան, Լոյս, 1906, էջ 1193) այսպէս կաթողիկեայց, ԲIP կաթուղիկեայց, այսպէս եւ Ժ որ կը կոչ "ի Սարգսէ վարդապետէ ասացեալ", H կաթուղիկայց, Ո կաթուղիկ, Ա կաթղ ‖ 2 Ժ զփոքունս: ԱԶԷՃP կրսերս, ԲԳԺՈ կրտսերս = ἐλάχιστος ‖ 3 Բ ի վերոյ, ԳԷՃP եւ Բ աղբ. ի վերս, Զ ի վեր, ԱՈ ի վերոյ: ԱԲԶԷՈP այսպէս զանձն, Գ եւ Բ աղբ. զանձնս, Ժ զանձս: Արկի զանձն յաշխատութիւնս = πόνοις ἐγχειρῶν. Բ իցիմ: Ա չէք ընդ: ՈՀ — տագնապաւ = οὐχ ἥκιστά γέ πως πέφυκα ἀκινδύνως (Palatinus, Vat. n. 363 et Cryptoferratensis ἀκίνδυνός) γε ‖ 4 Ժ մակուկ որ (sic): Մակուկաւ = σχεδίᾳ. Բ զհամատարած ծովն, Զ զհամատարածն ծով = τὸ πέλαγος. Հատանել անցանել = ἐκτέμνειν ‖ 5 Գ եւ Բ աղբ. հողմոց մրրկացն, Է հողմոցն մրրկացն: Ժուժկալ լինել = ὑποίσειν. Բ սակաւիկ ինչ: ԱԲԶԷԺ շարժելոց, Գ [illegible] անդուրժիցէ:

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա.Մ. [illegible]

չՀանդարտիցէ, փոքր մի շնչելոյ հիւսիսային հողմոյն, այլ անձամբ անձին պէսպէս իրաւք այնուհետեւ ի հողմակոծելն անձին մեղ դնիցէ թշուառականն, ըստ նմին աւրինակի եւ ես այժմ ինքնին իսկ քաջ գիտեմ զանձին տաղնապ, այսու զի իմով յանդգնութեամբս յաւժարեմ, բայց այս եւեթ — զի արժանաւոր պատասխանատուութիւն ի մէջ բերիցս — վասն ամենեցուն միշտ հնազանդելոյ։ Ցորս եւ ես յանդգնիմ՝ աղաչեմ չլինել ձեզ ինձ մեղադիր, բայց զի արդարեւ սիրոյ աւրինաւք բռնադատեալ ի քէն, եղբայր պատուական Ա թա-

դակութիւն աստուածեղէն վկայութեանց„ (էջ 482—485), "Պատճառք„ (էջ 486, 487) եւ "Դիր գլխոց կաթողիկէ թղթոյն Յակովբայ„ (էջ 487—489), ուրեմն ոչ "իւրաքանչիւր թղթոցն կաթողիկեայց„, ինչպէս ունի հայերէն լաւագոյն ձեռագրախումբ մը։ Լամբրոնացին (= Ե) է որ յիշուած լաւագոյն ձեռագրախումբի այս ընթերցուածին հանդէպ կը ներկայացընէ ինքնահնար կամայական ընթերցուած մը, հայ բնագիրը մօտեցընելու դիտումով անտարակոյս յոյնին՝ Դիր գլխոց կաթողիկէ Յակովբու ընդ նմին ունի է մասուն բարձանեալ ըստ կցորդութեան = ἔκθεσις κεφαλαίων τῆς καθολικῆς Ἰακώβου ἐπιστολῆς, μεθ' ὧν περιέχει μερικῶς ὑποδιαιρέσεως τῶν διὰ κινναβάρεως, հմմտէ եւ էջ 130, B միայն հեռաւոր նմանութիւն ցոյց կու տայ լամբրոնեան այս տարբերակին հետ՝ Դիր գլխոց կաթողիկէ թղթոյն Յակովբայ, որուն կը կցուի տարօրինակ սա ծանօթութիւնը "վասն սորա դաւաճանեն հերցուածողք թէ ոչ կցորդի այլոցն„, Սարգիսեան, Ցուցակ, Ա., էջ 56։ Նուազ խանդարուած ձեւերով կ'աւանդեն գլխակարգութիւնս հետագայ ձեռագիրները, Ա կը գրէ՝ Դիր գլխոց ըստ իւրաքանչիւր թղթոցն կաթուղիկէ Թուխտ Յակովբու. ընթերցուած ա. Յակովբոս Աստուծոյ եւ տեառն Յիսուսի Քրիստոսի։ Վասն համբերութեան..., Զ՝ դիր... (չիք ըստ)... կաթուղիկեայց։ Թուղթ Յակովբու. ընթերց. ա. Յակովբոս Աստուծոյ եւ. ա. վասն համբերութեան..., Է՝ դիր... (չիք ըստ)... կաթուղիկեայց։ Թուղթ Յակոբու ընթերցուածն ա. Յակոբոս Աստուծոյ եւ տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ։ Վասն համբերութեան..., Ժ՝ դիր... (չիք ըստ)... կաթուղիկեայց։ Թուղթ Յակովբու. ընթերցուած առաջին։ Վասն համբերութեան..., Ի՝ դիր... (չիք ըստ)... կաթողիկեայց։ Թուղթ Յակոբու ընթերցուած ա։ Յակոբոս Աստուծոյ եւ տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, Սարգ., անդ, էջ 828, Ի՝ դիր... (չիք ըստ)... թղթոցն կաթողիկեայց։ Թուղթ Յակոբու, Սարգ., անդ, էջ 832, Բ՝ դիր... գլխոց ըստ իւրաքանչիւր թղթոցն կաթուղիկեայց։ Թուղթ Յակովբու. ընթերցուած առաջին, Մուրատ, Յայտն. Յովհն., էջ ՅՀԲ, Գ՝ դիր... (չիք ըստ)... թղթոց կաթողիկեայց։ Թուղթ Յակովբու ընթերցուած. Ե- է բառն որ ասէ Յակոբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ, Սարգ., անդ, էջ 816։ Այս խումբին տուած "ընթերցուած ա„ի դէմ "ընթերցուածք բ„ տարբերակը կ'աւանդեն Դ՝ դիր գլխոց իւրաքանչիւր թղթոցն կաթողիկեացիոց։ Թուղթ Յակովբայ ընթերցուածք բ. Յակովբոս (Աստուծոյ) եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի, վասն համբերութեան..., Բ՝ պակասաւոր՝ Թուղթ Յակոբու ընթերցուածք բ. Յակոբոս Աստուծոյ եւ այլն, Սարգ., անդ, էջ 138 եւ Ճ՝ դիր... (չիք ըստ) թղթոցն կաթողիկեաց։ Թուղթ Յակոբա. ընթերցուածք բ, "ուր — կը ծանօթագրէ Սարգիսեան — իւրաքանչիւր գլխոյ սկիզբն դրուած է մանրագիր նոյն գլխու սկզբնատողը այսպէս ա. Յակոբոս Աստուծոյ եւ։ Վասն համբերութեան„, անդ, էջ 800։

1 Զ շնչելոյ, Բ ի շնչել։ Զ հիւսիսային։ Է յանձին ‖ 2 Բ հողմակոծեալն։ Զ դիցէ։ Սակաւ ինչ — թշուառականն = βραχεῖαν δέ τινα κυμάτων ἐπανάστασιν μὴ φέρει, μικρὸν ὑποσυρίζοντος τότε τοῦ βορρέα, ἀλλ' ἄλλοθεν ἄλλῃ μυρίοις τὸ λοιπὸν ἐγκλήμασιν ὁ δείλαιος ῥιπίζεται. ԱԳԻԺ եւ Բ ագր. չիք եւ (ես), ԲԶ ունին ‖ 3 Է զանձին իմոյ տաղնապ։ Է իմովս յանդգնութեամբ, Զ իմով յանդգնութեամբ։ Բ աւժարեմ, Է յաւժար եմ, Զ յաւժարիմ, Ժ եւ յաւժարեմ ‖ 4 եւեթին Գ միայն կը կցէ զի յաւժարիմ, իսկ Զ՝ բայց այս եւեթ զի յաւժարեմ արժանաւոր։ ԲԳԺ եւ Բ ագր. պատասխանատուութիւն, իսկ Զ պատասխանատրուն-, տես էջ 97 ‖ 5 Ժ հնազանդելոց։ ԲԶԷԺ չիք եւ (ես)։ Բ յանդգնեմ։ Բ չիք ձեզ։ Հայուն տուած "ըստ նմին աւրինակի — յաւժարեմ„ հատուածը կրնայ վերականգնել յոյն բնագրին այս տեղիքը, որ in omnibus quos vidi, Codd. mire corruptus est, Zacagni, էջ 476 ‖ 6 Է սիոյ փինկ սիրոյ։ Բ բռնադատել։

նասիէ, որպէս զանղաւր տկար ոք ի նահատակաց ետու զանձն ի գործ եւ ընդ իմոց վաստակոց յամենայն ժամ ունիմ ակն վարձուց ի փրկութիւն։ Թէ այդպէս իցէ, ով սիրելիդ իմ գլուխ, հանապազորդ պարտուց իմոյ հնազանդութեանս մի ժխտաւղ լինիցիս եւ ի վշտակցութիւն այժմու վշտացս մերոց խոնարհեալ, զամենայն սեռն եւ սերտ սիրով հատո մեզ արդեամբք՝ ածեալ յաղերս զԱստուած վասն մեր, համաւրէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի սրբոցն գնդիւք ի միասին գումարելովք[1] առնել աղաւթս անդադար վասն մեր եւ լինել բարեխաւս։ Գիտեմ զի լինիցին երախտաւորք ըստ աւրինակի նոցա, որոց երբեմն զյարկ տանն քակեալ կախեալ իջուցին զանդամոյցն առ Յիսուս, իւրեանցանն հաւատովք յակամայ ցաւոց լկելոյն շահեցան զբժշկութիւն։ Ընկալ այսուհետեւ, ընկալ

1 Որպէս — ի գործ = οἷα γάρ τις ἡμιθνήτων ἀναλκὴς ἐμαυτὸν εἰς ἔργον ἐκδιδούς ‖ 2 Ա իմոյ վաստակոյ... ի փրկութեան ‖ 3 ԱԺ եւ Բ ագր. Այսպէս իմոյ, մինչ ԲԳԶԷ իմոց։ ԷԺ ժխտող։ Մի ժխտող լինիցիս, Z. ունի εὐγνωμόνει, Հայը սակայն իր բնագրին մէջ ունեցած է ἀγνωμόνει, որմէ ծնունդ է առած «մի ժխտող լինիցիս»ը ‖ 4 Ա վշտակցութիւն, Բ վշտակցութեան յայժմու։ Ժ վշտաց մերոց։ Բ սերտ։ ԶԺ հատոյ, Ա հաւատոյ ‖ 5 Ա արեամբք։ Ի վշտակցութիւն — արդեամբք = πρὸς συμπάθειαν τῶν ἡμετέρων κακῶν ἄρτιγε νεύσας, τὸ πᾶν ἀγάπης ἡμῖν κρατίστης ἔργον ἀντιδίδου. Բ յածել փինկ ածեալ, ԷԺ ածել։ ԷԺ եկեղեցոյ ‖ 6 Ա գնդովք։ Ժ գումարելով։ Բ անդադարս ‖ 7 Բ բարէխաւս։ Բ երախտաւոր ‖ 8 Ժ եւ կախեալ, Ա չէք կախեալ։ Է առաջի Յիսուսի ‖ 8—9 Ա իւրեանց անհաւատովք, Է իւրեանցն անհաւատովք, Ժ իւրեանցն անն հաւատով, Բ իւրեանցն հաւատովք, Զ իւրեանցն հաւատաւք, Գ իւրեանցնանն, նոյնպէս Թոռնեան, Հատընտ. ընթերց. Բ, էջ 372, Բ ագր. իւրեանցանն, զոր կը նախընտրեմ, յոյնը οἰκείᾳ ‖ 9 ԱԲ ցաւոցն, Զ ցաւաւք։ Յակամայ ցաւոց = τῶν ἀκουσίων

---

[1] ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՌԱՔՆՈՒԹԻՒՆ՝ «Հոմ-բէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի սրբոցն գնդէ-ւ ի միասին գու-մարելովք առնել աղաւթս անդադար վասն մեր եւ լինել բարեխաւս» = ὅλον τε τὸν ἐν Χριστῷ τῆς ἐκκλησίας ἄνθρωπον, τὸν τῶν ἁγίων σύλλογον καθικετεύων ἀλήκτως πρεσβεύειν ὑπὲρ ἡμῶν, չափազանց յատկանշանական են Հայուն այստեղ ցոյց տուած շեղումներն, անոր համար մանաւանդ որ Կորիւնն ալ իր կարգին գիտէ գործածել ճիշդ նոյն բացատրութիւնները՝ «իսկ ցանկալի տեառն եղբայրն Յակոբոս, զՀոմ-բէն իսկ զդ-ն-դ- սրբոցն... յաւրինակ առեալ ի Թղթին իւրում, ասէ», էջ 6—7 (տպ. «զդ-ն-դն սրբոց», առ Բիւզանդայ ի նմին տեղւոջ «զդ-ն-դ- սրբոցն», Դ, դ, 78, համեմատ Եւթաղի) եւ այլուր «եւ ամենայն սրբովք ի Դ-ն-բ-մ-բելովք», էջ 27 (յորմէ եւ Ագաթ., էջ 399)։ Նորայր, Եւթաղի եւ Կորեան գրութիւններու միջեւ տիրող լեզուական սերտ կապակցութեան վրայ հիմնաւորուած անտարակոյս՝ Կորեան լաւագոյն ընթերցուածովն ուղղելի կը կարծէ Եւթաղի «Հոմ-բէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի սրբոցն գնդէ-ւ ի միասին գումարելովք» ձեւագիտօրէն անկատար հատուածը՝ «թերեւս ուղղելի ըստ Կորեան հատուածին «զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, Հոմ-բէն սրբոց գնդէ-ւ ի միասին գումարելովք առնել աղաւթս» եւ կը շարունակէ «իսկ զամենայն մարդիկ... առնել աղաւթս եւ լինել բարեխաւս, թէպէտ եւ չէ սխալ, բայց կարելի է որ թարգմանչին բուն գրածն ըլլայ՝ զի ամենայն մարդիկ... առնել աղաւթս եւ լինել բարեխաւս», այսինքն զի ամենայն մարդիկ... առնիցեն աղաւթս եւ լինիցին բարեխաւս»։ Կոր. Վարդ., էջ 166 եւ 170։ Եւթաղի հատուածին մէջ Հոմ-բէնի գրաւած քերականօրէն խախուտ դիրքը իրապէս հաւանական կարծել կու տայ նորայրեան առաջին վարկածը՝ Հոմ-բէնի տեղափոխումը, զոր սակայն կը թուի ինծի թէ պէտք է դեռ յետաձգել, մինչեւ որ գտնէ ձեռագիր մը տրամադրէ մեզի բաղձալի տարբերակը, մինչդեռ Նորայրի երկրորդ ենթադրութիւնը (զի ամենայն մարդիկ... առնել) կը հանդչի հայերէն բնագրին սխալ ըմբռնումին վրայ եւ է հետեւաբար անընդունելի, քանի որ ոչ հեղինակը եւ ոչ թարգմանիչն ըսել կ'ուզեն ուղղակի թէ «զի ամենայն մարդիկ... առնիցեն աղաւթս», այլ թէ «ածեալ յաղերս զԱստուած վասն մեր (τὸν Θεὸν ὑπὲρ ἡμῶν ποτνιώμενος) եւ զամենայն մարդիկ (ὅλον τε τὸν... ἄνθρωπον) առնել աղաւթս... վասն մեր (յոյնէն տարբեր՝ τὸν τῶν ἁγίων σύλλογον καθικετεύων) եւ լինել բարեխաւս» (յոյնէն տարբեր՝ πρεσβεύειν ὑπὲρ ἡμῶν).

առ ի մէնջ ախորժելով զքոյ հրամանացդ վաճառաշահութիւն աղաւթիւք վասն մեր, ընդ մերոյ հնազանդութեանս լինել ցանկ հատուցանաւղ։ Այլ ես տուն առ տուն կարգաւ զկաթողիկեայս Թուղթն ընթերցայց եւ զզլխակարգութիւնսն միանգամայն եւ զաստուածեղէն վկայութիւնսն ըստ իմում տկարութեանս կարգեցից։ — Տունք լէ։

ԴԻՐ ԴԼԽՈՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

(եւ են ի նոցանէ որ եւ մասնաւոր ներքնաբաժինս ունին կարմրագեղով։)

ԴԼՈՒԽՈՒ ԹՂԹՈՑՆ ՅԱԿՈՎԲԱՅ

Ա. Վասն համբերութեան եւ անխիղճ հաւատոյ եւ վասն խոնարհութեան մեծատանց։ Ա. Յորում վասն ի մեզ հրոյն եւ վասն որ ի նմանէ կարիքն իցեն, եթէ ոչ են յԱստուծոյ այնպիսի պատճառք, այլ որ ինչ բարի է ի մեզ այն ի նմանէ է։

Բ. Վասն հեզութեան եւ սրբութեան եւ գործոց բարեաց եւ սրբութեամբ տուրս տալոյ եւ վասն ցածութեան եւ չափով զբանս խաւսելոյ։

Գ. Վասն առ իւրաքանչիւր ոք սէր ունելոյ առանց ակնառութեան ըստ աւրինացն։

Դ. Եթէ ոչ ի հաւատոյ միայն, այլ եւ ի գործոց եւ եթէ ոչ առանց միոյ ի նոցանէ արդարանայ մարդ։

Ե. Եթէ յանդուգն եւ անխրատ լեզու սղանանէ զստացողն, զոր կարճել պարտ է ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ։ Ա. Յորում վասն բարւոք գնացից եւ առանց կռուոյ լինելոյ ընդ միմեանս ի փառասիրութենէ մարդկեղէն իմաստութեան։ Բ. Վասն աստուածեղէն իմաստութեանն։ Գ. Եթէ ի ծուլութենէ եւ ի ցանկասիրութենէ հակառակութիւն եւ

παθῶν. Բ յայսուհետեւ ‖ 1 Զ քոյ — վաճառաշահութիւն = τῶν σῶν ἐπιταγμάτων τὴν πραγματείαν. Է եւ աղաւթիւք ‖ 2 Ա չէք լինել։ Ծ ցանգ։ ԱՐԶԷԺ հատուցանող ‖ 3 ԱԶ զկաթուղիկեայց, Բ զկաթողիկեայս, Ծ զկաթուղիկեայս, Է զկաթուղիկեայս = τὰς καθολικάς. Ա թուխթան, Բ զԹուղթան։ Զ ընթերցա։ Գ զզլխակարգութիւնս, տես էջ 172։ Բ վկայութիւնս ‖ 4 Բ տկարութեանն, ԺՃGHP տկարութեան։ Զ կարգեցի։ Ա յսպէս ԲԶԷՃGP ունին տունք լէ, Ա տունք երեսուն եւ եւթն, H տունք ԼԷ։ Զ (sic), յոյնը չունի στίχοι.

1 ՌA գիր։ E գլուխք փոխնկ դիր դլխոց։ C թղթոյն ‖ 2 () մեր յաւելուածն է։

1 ՌQ գլուխ։ ԳՎՑ Յակոբայ, A Յակոբայ, CQ Յակովբու ‖ 2 Գլուխներու գլխաւոր թիւերը չունի Ա։ Ա Հաւատոյ։ Է անխեղճ։ Բ մեծատանցն ‖ 3 ԱՐԳԶԺ եւ Բ ագր. ունին ա, Դ չունի ստորաբաժանումի թիւր, իսկ Է կը դնէ հոս ի լուս. բ։ Ե յորում վասն որ, Ծ յորում որ վասն որ ի մեզ հրոյն եւ վասն որ ի նմանէ։ Ա ի նմանէն։ Ա չէ փոխնկ ոչ են ‖ 4 ԲԴԵԶԷԺ չեն։ Ե որ ինչ բարի մեզ։ Ա ի նմանէն։ Դ է (ի նմանէ)։ Յորում վասն — ի նմանէ է = ἐν ᾧ περὶ τῆς ἐν ἡμῖν πρώσεως (այսպէս հայը) καὶ τῶν ἐξ αὐτῆς παθῶν, ὅτι οὐ παρὰ θεοῦ τὸ αἴτιον... εἴ τι γὰρ ἀγαθὸν ἡμῖν, παρ' αὐτοῦ ‖ 5 Է ունի գ փոխանակ Բի։ Սրբութեան = ἁγνείας ‖ 6 Դ տալ։ Դ չէք եւ (չափով)։ Ծ պղծութեան փոխնկ ցածութեան։ Եւ սրբութեամբ — խաւսելոյ = καὶ πράξεως ἀγαθῆς μεταδοτικῆς ἐπὶ μακαρισμῷ, καὶ περὶ ἐπιστήμης καὶ συμμετρίας λόγου. Գ եւ Բ ագր. զբանն։ Ե խաւսել ‖ 7 Է ունի դ փոխնկ Գ։ ԲԳ չէք առ։ Դ չէք ոք։ Բ յակնառութիւն ‖ 8 Է ունի ե փոխնկ Դ։ Բ չէք Գ։ Բ ի հաւատոյն։ Ա միայն արդարանայ։ Բ չէք եւ (եթէ)։ ԴԾ եւ թէ ‖ 9 ԴԶԷԺ արդարանա։ Եւ եթէ — արդարանայ = οὐκ ἐκ θατέρου ἰδίως ἀλλ' ἐξ ἀμφοῖν ἅμα δικαιοῦται ‖ 10 Է ունի զ փոխնկ Ե։ ԲԳԵԺ զատացաւղն, Է զանձն փոխնկ զատացողն ‖ 11 ԳԵ եւ Բ ագր. ի գովեստս, մինչ ԱՐԴԶԷԺ ի գովութիւն։ Բ չէք ա։ Զ բարիոք, Բ բարուոք։ Ա կռիւ, Դ կռուս, Զ կռբուս, Ծ կռուոյ ‖ 12 ԲԴ չէք բ ‖ 13 Բ իմաստութենէ։ ԲԴ չէք գ։ Զ թէ։ Ա չէք ի ցանկասիրութենէ, Ե ի ցանգասիրութենէ, ԴԺ ի ցանկութենէ։

խռովութիւն եւ թշնամութիւն առ Աստուած լինի։ ղ. Վասն ապաշխարութեան ի փրկութիւն եւ վասն չդատելոյ զընկերն։

Զ. Եթէ ոչ մարդով, այլ Աստուծով ուղղին գնացք առն։ ա. Յորում վասն ագահութեան մեծատանց եւ յաշխարհի փափկութեանց նոցա եւ վասն արդարադատութեան Աստուծոյ։ ռ. Վասն երկայնմտութեան եւ համբերութեան չարչարանաց եւ վասն ճշմարտութեան։ գ. Խրատք առանձինն եւ իւրաքանչիւր ուրոյն պատշաճք հաւատովք։ դ. Եթէ սպասաւոր պարտ է լինել ընկերին փրկութեան։ — Տունք իե։

Յակովբու. թուղթս գրեցաւ յԵրուսաղէմ առ եբրայեցիս ի սփիւռս։

Ի Յակովբու թղթին ընթերցուածք բ. ընթերցուածն ա՝ տունս ՃԺբ. ընթերցուածն բ՝ տունս ՃԻե. գլուխք զ. վկայութիւնք դ. տունք մէ։

ԳԼՈՒԽՔ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ

Ա. Վասն Քրիստոսիւ վերստին ծննդեանն եւ վասն համբերութեան փորձանաց եւ վասն փրկութիւնագործ հաւատոցն յառաջագոյն պատմելոյ ի մարգարէից։

Բ. Վասն յուսոյ եւ սրբութեան, զոր պարտիմք յաղագս որդեգրութեանն զգուշաւոր գնացիւք։

Գ. Վասն արժանի ըստ որդեգրութեանն կեալ ի Քրիստոս յաւգուտ արտաքնոցն եւ ի փառս Աստուծոյ։

Դ. Վասն իշխանաց հնազանդ լինելոյ եւ եղբայրսիրութեան եւ աստուածպաշտութեան։ ա. Յորում վասն ծառայից հնազանդութեան եւ անոխակալ համբերութեան

1 Դ չիք խռովութիւն, Ժ խեղութիւն փխնկ խռովութիւն։ Բ ունի ղ, ոի տեղ բ ունի Դ, իսկ Է ունի ա ‖ 1—2 Դ վասն աստուածպաշտութեան... եւ վասն չդատապարտելոյ ‖ 2 Ե չիք վասն (չդատելոյ)։ Զ չդատելոյ։ Բ զնկերն ‖ 3 Զի տեղ գ ունի Դ, իսկ Է՝ ռ։ ԱԶԷ թէ։ ԲԴ չունին ա ‖ 4 Դ եւ մեծատանց։ Ա աշխարհի։ ԲԴԵ փափկութեան նոցա։ Ա չիք նոցա։ Բ արդարութեան, ԱԴԶԺ արդարութեանն, ԷԻ արդարադարութեանն = δικαιοκρισίας ‖ 5 Դ ունի դ փխնկ ռ ‖ 6 Դ ունի ե փխնկ գ։ Այսպէս Զ ըստ յոյնին παραινέσεις ἰδικαὶ ἑκάστῳ προσήκουσαι μετὰ πίστεως, Է ունի խրատ... պատշաճ, Ժ՝ խրատք առանձինն եւ իւրաքանչիւր իւրոյն պատշաճք հաւատով, Դ խրատ առանձինն եւ իւրաքանչիւր իւրոցն պատշաճ հաւատոցն, Բ խրատ առանձինն, եւ իւրաքանչիւրոցն ուրոյն պատճառք հաւատովք, այսպէս եւ Գ եւ Բ ագր. միակ հաւատով տարբերակով, Ա խրատ առանձինն եւ իւրաքանչիւրոցն պատճառք հաւ"։ Դ ունի զ փխնկ ղ։ Զ թէ ‖ 7 ԴԷ չիք տունք իե, ԱԲԵԶԺ տունք իե, Ժ տունք քսան եւ հինգ = στίχοι κε՛, ԴԷ չիք ‖ 8 Վերջագիրն ունին ինձի ծանօթ ձեռագիրն երէն միայն ԲԳ (Զ. Հրապեան, էջ 750 եւ Սարգիսեան, Ցուցակ, Ա, էջ 13), ԶԺԺՈԱՐ Յակովբու (ԳԱ Յակոբու) թուղթս գրեցաւ յԵրուսաղէմ (Ժ չիք յԵրուսաղէմ) առ Հեբրայեցիս (ԱԺՈ Եբրայեցիս, Ր Եբրաեցիս, Բ Եբայեցիս) ի սփիւռս (Ր ի սփիւռն) ‖ 9—10 Ա "տունք իե„ին կը յարէ "Յակովբու թխթոյս„, որուն կը յաջորդէ առաջին կաթողիկէ թուղթը, Դ "ընկերին փրկութեան„ին կը կցէ "Յակոբ. թու. յԵՐ„ եւ կը սկսի առաջին կաթ. թուղթը, Է "ընկերին փրկութեան„ով կը կնքէ եւթաղեան կաղմածը։

1 Գ գլուխս։ ԲԱԳԻ առաջնոյ։ Ա թխթոյն։ Պետրոսի աւ-ա-ելոյ ունին միայն Գ եւ Վ ‖ 2 ԱՐ Քրիստոսի։ Բ ծննդեան։ Վերստին ծննդեանն = ἀναγεννήσεως. Փորձանաց = πειρασμῶν ‖ 3 Յառաջագոյն պատմելոյ = προκατηγγελμένης. Է ի մարգարէից ‖ 4 Բ չիք Բ։ Բ յուսոյն։ Ա յաղաւթս փխնկ յաղագս։ Բ արդարութեան ‖ 4—5 Զգուշաւոր գնացիւք = ἀσφαλοῦς ἀναστροφῆς ‖ 6 ԲԺ որդեգրութեանն, Զ որդեգրութեան։ ԲԵ կալ։ Է արտաքնոց։ ԳԵ եւ Բ ագր. չիք եւ (ի փառս) ‖ 6—7 Վասն արժանի — Աստուծոյ = περὶ τοῦ ἐπαξίως τῆς υἱοθεσίας ζῆν ἐν Χριστῷ πρὸς ὠφέλειαν καὶ τῶν ἔξωθεν, εἰς δόξαν Θεοῦ ‖ 8 Բ լինելոց ‖ 9 Յա-

վան Քրիստոսի։ Բ. Վասն հնազանդութեան կանանց եւ միաբանութեան ընդ արս առ ի փրկութիւն հոգւոյն յաւրինակ Սառայի։ Գ. Վասն արանց զեւրեանց կանամբք գալոյ։ Դ. Վասն ամենեցուն հեզ եւ հանդարտ անոխակալութեան, որոյ աւրինակ առ Նոյիւ Աստուծոյ մարգասիրութիւնն եւ առ մեւք աւաղանաւն Քրիստոսի չարչարակցութիւն։

Ե. Վասն մերկանալոյ զզործս չարութեան եւ առնելոյ հոգւով զպտուղս արդարութեան, ըստ ազգի ազգի եւ պէսպէս շնորհաց։

Զ. Եթէ հաղորդութեամբ ընդ Քրիստոսի յաղթել պարտ է բնական կարեաց եւ յուսոյն որ ի նա համբերել լկանաց որ յայլոց։

Է. Խրատ երիցանց վասն հաւատից տեսչութեան։ Ա. Ցորում վասն հասարակաց ամենեցուն իւրաքանչիւր խոնարհութեամբ (ի) յաղթութիւն ընդդէմ հակառակորդին։

Ը. Աղաւթք վասն կատարման հաւատոց։ — Տունք իւ։

Ցառաջին թղթին Պետրոսի ընթերցուածք Բ. ընթերցուածն ա՝ տունս ձե, ընթերցուածն բ՝ տունս ճխը։ Գլուխք Ը. վկայութիւնք ժդ. տունք մկդ։

ցում վասն ծառայից „ով կը սկսի Դ Պետրոսի Ա գլխոյն. գլուխը։ Դ համբերութեանն։ Անոխակալ համբերութեան = ἀνεξι ἀκου ὑπομονῆς ‖ 1 ԵԶ կանաց։ Բ առ ի փրկութեան ‖ 2 Ա հոգւով, Է հոգւոց։ Ա Սարրայի։ Առ ի փրկութիւն = καὶ (περὶ) σωτηρίας. Ա զեւրեամբք կանանց։ Ժ գոլոյ։ Վասն — գալոյ = περὶ τῆς ἀνδρῶν πρὸς γυναῖκας συμπεριφορᾶς ‖ 3 Դ վասն ամենայն։ Է անոխակալութեանն։ Գ միայն որ յաւրինակ փխնկ որոյ աւրինակ ‖ 4 Ա մարգասիրութեանն, Բ մարգասիրութիւն, Զ արդարութիւնն։ Դ միաւք։ ԱԵԶ չարչարակցութիւնն = συμπάθεια ‖ 5 Վասն մերկանալոյ = περὶ ἀποθέσεως. Գ եւ Բ ագր. զգործ։ ԱԲԺ առնլոյ, Դ առնելով, Է առնելո = ἐπαναλήψεως. ԱԲԴԺ զպտուղ ‖ 6 Բ ըստ ազգի եւ պէս շնորհաց, Զ շնորհացն ‖ 7 Ժ թէ։ ԱԲԴԶԺ հաղորդութեամբն քրիստոսի, Է հաղորդութեամբն ընդ քրիստոսի, ԱԴԷԺ կարեացն ‖ 8 Գ եւ Բ ագր. միայն եւ յուսով նորին, որ սակայն սխալ է, հմմտէ ἐλπίδι τε τῇ εἰς αὐτόν. Դ համբել լկանանաց (sic)։ Բ այլոց ‖ 9 Ա չիք վասն (հաւատից)։ Բ հաւատիտ (sic) ‖ 8 - 9 Դ չունի յորում — հակառակորդին։ Այս հատուածը, որ պայծառ չէ, բառական թարգմանութիւնն է յոյնին ἐν ᾧ περὶ κοινῆς πάντων πρὸς ἕκαστον ταπεινοφροσύνης εἰς νίκην τὴν τοῦ διαβόλου ‖ 11 Բ չունի Ը. Դ կը դնէ Է։ Դ հաւատոց, Է հաւատոց։ Գի համար Սարգիսեան կը դնէ "տունք լէ", Ցուց. Ա, էջ 817։ Միւս բոլորը ունին տունք իւ = στίχοι κε′ ‖ 12 Այսպէս յառաջին թուղթին ունի Ռ, Ի առաջին, ԲԴԶԷԺP թղթիս, Ա թուխթն։ Ա ընթերցուած ա, Ի ընթերցուածն առաջին, Զ առաջին ընթեր., P ա. ընթերցուածն։ Էժ տունս ունի։ Այսպէս ձե ունին ԱԲԳԷԺՌIP, իսկ յոյնն ունի νη′ = ծը ‖ 13 Ա ընթերցուած բ, Ի ընթերցուածն երկրորդ, Զ երկրորդ ընթեր., P բ. ընթերցուածն։ Էժ տունս ունի։ Այսպէս ճխը ԱԲԴԶԷԺՌIP, յոյն՝ ρμθ′ = ճխթ։ Ա գլուխտ (sic)։ Դ գլուխք բ։ Ա վկայութիւն, Բ վկայութիւնդ։ Այսպէս ժդ ունին ԱԲԴԷԺ, նոյնպէս յոյնը ΠΙ + ΠΙΙΙ, մինչդեռ Զ ժբ, իսկ ՌIP ժգ։ Այսպէս ուղիղ մկդ (ձե + ճխը = մկդ) ԲԶԺ, իսկ Ա (տունս) ԷՌIP մկդ, եւ Բ թղթոյն կատարածին ստիք մկդ։ Է տունք մկդ։ Դ չիք. թղթոյն կատարածին յոյնն ալ ունի σλς′ = մկդ (Z. էջ 497) mit der Variante 300 (Codex Vat. n. 363 στίχοι τ′), մինչդեռ ընթերցուածոց բովանդակութեան νη′ եւ ρμθ′ թիւերը կուտան σξ′ համագումարը, ուրեմն մէ։ Հմմտէ Zahn, անդ, էջ 398, Ա՚ի կատարած թղթոյն ունին "տունք մկդ", Զ մկդ։

Հ. Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Շարունակելի։)